ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆ. ՄԵՐ ԶԵՆՔԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՄԵՐ ԳԻՏԵԼԻՔԸ, ԱՅԼ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ ԵՍ ՉԵՄ ՏԵՍՆՈՒՄ

14.06.2014 13:24

Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց հիմնադրամի 2-րդ շրջանավարտները, որոնք հանձնել էին որակավորման քննությունները, այսօր հունիսի 14-ին հանդիսավոր պայմաններում ստացել են փաստաբանական գործունեության արտոնագրեր: ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի նիստի օրակարգում եղել է փաստաբանի հավակնորդներին փաստաբանական գործունեության արտոնագրեր տրամադրելու հարցը: Խորհրդի անդամները միաձայն կողմ են քվեարկել օրակարգի հարցի վերաբերյալ, ինչի արդյունքում խորհուրդը որոշել է հավակնորդներին տրամադրել փաստաբանական գործունեության արտոնագրեր: Հավակնորդների երդմանը հաջորդել է փաստաբանի գործունեության արտոնագրերի հանձնման արարողությունը:

Հայաստանի Հանրապետության փաստաբանական համայնքը համալրվել է 56 փաստաբաններով: Շնորհավորելով արդեն փաստաբան դարձած իր գործընկերներին՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը նշել է,-‘Այսօր մեր համայնքը համալրվում է 56 ‘մարտիկներով’: Դուք գիտեք, որ փաստաբանի աշխատանքը շատ դժվար է. ինչպես փաստաբան- վստահորդ, այնպես էլ փաստաբան- դատարան հարաբերություններում և մեր զենքը պետք է լինի մեր գիտելիքը, այլ ճանապարհներ ես չեմ տեսնում: Փաստաբանների պալատը չի ներելու կոռուպցիոն գործարքների մեջ գտնվող փաստաբաններին’:

Փաստաբան դարձած իր գործընկերներին շնորհավորել է նաև Փաստաբանական դպրոց հիմնադրամի տնօրեն Սիմոն Բաբայանը՝ Փաստաբանական դպրոցը ավարտելու և փաստաբանական համայնքի շարքերը համալրելու կապակցությամբ: ‘Առկա օրենսդրական զարգացումների և իրավական համակարգերի կատերալագործումը ձեզ առաջադրել է բարդագույն խնդիր. ըստ արժանվույն իրականացնել ձեր առաքելությունը: Փաստաբանական դպրոցի հարթակում ձեռք բերած ձեր հմտությունները ծառայեցրեք ձեր նպատակին: Իրականացրեք ձեր իրավապաշտպան գործունեությունը՝ պահպանելով անկախության, օրինապահության, անաչառության սկզբունքները’,- նշել է Սիմոն Բաբայանը: Խոսելով փաստաբանական դպրոցի դիրքի ու զարգացման մասին՝ փաստաբանական դպրոցի տնօրենը փաստել է, - ‘ակնհայտ է, որ փաստաբանական ինստիտուտը զբաղեցնում է իր տեղը մեր հասարակությունում: Դրա վառ ապացույցն է փաստաբանական դպրոցի

տեխնիկապես լավագույնս հագեցվածությունը: Օր օրի մեծանում է պետության ուշադրությունը փաստաբանական ինստիտուտի նկատմամբ: Առանց փաստաբանների դժվար է պատկերացնել օրենսդրական փոփոխություն կամ բարեփոխում’:
Ելույթ են ունեցել նաև Հայաստանի փաստաբանների պալատի խորհրդի անդամներ Նիկոլայ Բաղդասարյանը, Կարեն Մեժլումյանը և Մարտուն Փանոսյանը:
Հավակնորդների երդման արարողությանը ներկա է եղել նաև ՀՀ արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը և նախարարի տեղակալ Արսեն Մկրտչյանը:

Erebuni Plaza
business center



ՁԱՆԱՉԵՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱՇՏ

ԱՆԱՀԵՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ՏԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱՀ

ՊԱՇՏՊԱՆԵՔ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })